



ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Երևան, 19 Փետրվարի, 2013 թվական: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը հանդիսանում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ ԺՀՄԻԳ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) համատեղ աշխատանքի արդյունքը:

ԵԽՄՎ պատվիրակությունը ղեկավարում է Քարին Ուոլդսթրի (Նորվեգիա), և Միլան Ցաբրնոխը (Չեխիայի հանրապետություն) գլխավորում է ԵԽ պատվիրակությունը: Դեսպան Հայդի Թալիավինին (Շվեյցարիա) ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավարն է, որը սկսել է աշխատանքները 2013 թ. հունվարի 10-ին:

Գնահատումն իրականացվել է՝ որոշելու ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և Եվրոպայի խորհրդի չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը ներկայացվել է ամբողջ գործընթացի ավարտից առաջ: Ընտրությունների վերջնական գնահատականը մասամբ կայսմանավորվի ընտրական գործընթացի մնացած փուլերի իրականացմամբ, մասնավորապես, արդյունքների ամփոփմամբ և հետընտրական հնարավոր դիմումների և բողոքների լուծմամբ: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը կիրառարակի ամբողջական վերջնական իր զեկույցը, ներառյալ հնարավոր բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները, ընտրական գործընթացների ավարտից հետո մոտ ութ շաբաթ անց: ԵԽՄՎ կներկայացնի իր զեկույցումը Մթրասբուրգում ապրիլի նիստին: ԵԽ կներկայացնի իր զեկույցը Արտաքին գործերի կոմիտեին իր գալիք հանդիպմանը:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության փետրվարի 18-ի նախագահական ընտրությունները ընդհանուր առմամբ լավ կազմակերպված էին և բնութագրվում էին հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորմամբ: Մրցակիցները կարողացել են իրականացնել ազատ քարոզչություն: Լրատվամիջոցները կատարել են իրենց իրավական պարտավորությունը տրամադրել հավասարակշիռ լուսաբանում և բոլոր մրցակիցները օգտագործել են իրենց տրամադրվող անվճար եթերաժամը: Միաժամանակ, հանրային կառավարման անաչառության պակասը, վարչական միջոցների չարաշահումը և ընտրողների վրա կիրառվող ճնշումը մտահոգության առարկա են: Մինչդեռ ընտրությունների օրը անցել է հանգիստ և բնականոն, ոչ հարիր միջամտություններ են նկատվել ընտրական ընթացքի վրա հիմնականում գործող

նախագահի վստահված անձանց կողմից, և որոշ լուրջ խախտումներ են դիտարկվել:

Ընտրական օրենսդրությունը համապարփակ է և ընդհանուր առմամբ նպաստող ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Մի շարք դեպքերում իշխանությունները հայտնել են իրենց մտադրությունը անցկացնել ընտրությունները Միջազգային չափորոշիչների և Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ պարտավորություններին համապատասխան: 2012 թ. կայացած Խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է գտնել ընտրական գործընթացի բարելավման հնարավոր ուղիներ: Ելնելով դրական ընտրական փորձից՝ 2012 թ. հոկտեմբերին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը առաջարկել է առաջիկա ընտրությունների նախաշեմին զերծ մնալ օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ կատարելուց:

Ընտրական հանձնաժողովները պրոֆեսիոնալ կերպով կազմակերպել են ընտրությունները: ԿԸՀ-ն աշխատել է բաց և թափանցիկ: Այն հավատարմագրել է 26 հասարակական կազմակերպություններ ներկայացնող 6,034 տեղական դիտորդներ ներառական կերպով: Միաժամանակ, ԿԸՀ-ն չի ներկայացրել բավարար պարզաբանումներ քարոզչության ֆինանսավորման որոշ դրույթների վերաբերյալ: Իշխանությունների կողմից ձեռնարկված բազմաբնույթ միջոցառումները նպաստել են ընտրական ցուցակների որակի բարելավման գործընթացին: Թեպետ որոշ թեկնածուներ պնդում էին, որ ընտրական ցուցակները ուռճացված են և մտահոգություն են հայտնել երկրից դուրս գտնվող ընտրողների փոխարեն քվեարկելու հնարավոր դեպքերի մասին, այնուամենայնիվ նրանք չեն տրամադրել որևէ ապացույց իրենց տեսակետը պաշտպանելու համար մինչև ընտրությունները:

Թեկնածուների գրանցումը անցել է ներառական կերպով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) գրանցել է բոլոր ութ առաջադրված թեկնածուներին, ովքեր ներկայացրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը և վճարել են ընտրական գրավը: Մեկ թեկնածու հետագայում ինքնաբացարկ է հայտնել: Թեկնածուների առաջադրման համար սահմանված 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջներն ավելի քան խիստ են: Բոլոր դատապարտյալներին՝ անկախ գործած հանցագործության ծանրությունից, ընտրելու իրավունքից զրկելը հակասում է համընդհանուր ընտրական իրավունքին և այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Քարոզարշավը բնութագրվել է հիմնարար ազատությունների նկատմամբ ընդհանուր հարգանքի դրսևորմամբ, և մրցակիցները կարողացել են անխոչընդոտ իրականացնել իրենց քարոզչությունը: Քարոզարշավը ընդհանուր առմամբ սահմանափակ էր: Այն տեղի է ունեցել երեք հիմնական քաղաքական կուսակցությունների թեկնածու չառաջադրելու և որոշ կարկառուն գործիչների չառաջադրվելու որոշման պայմաններում: Ութ թեկնածուներից միայն գործող նախագահն է առաջադրվել խորհրդարանական կուսակցության կողմից: Քարոզարշավի ընթացքում թեկնածուներից մեկը ստացել է հրազենային վնասվածք և այդ հանցանքի

հանգամանքները գտնվում են հետաքննության մեջ: Բացառությամբ այս միջադեպի քարոզարշավը խաղաղ է ընթացել:

Գործող նախագահի քարոզարշավը ամենաակտիվն էր և տեսանելին: Վարչական ռեսուրսների չարաշահումը, այդ թվում ընտրողների վրա ճնշում գործադրելու դեպքերը, գործող նախագահի քարոզչական միջոցառումներին պետական պաշտոնյաների մասնակցությունը, ինչպես նաև պետական և ինքնակառավարման մարմինների կողմից զբաղեցրած շենքերում նախընտրական շտաբների գտնվելու մի քանի դեպքերը աղավաղել են պետության և իշխող կուսակցության բաժանումը, ինչը հակասում է 1990 թ. ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 և 7.7 պարբերությունների մեջ ամրագրված պետության և քաղաքական կուսակցությունների հստակ բաժանման հիմունքներին:

Լրատվամիջոցները էական ուշադրություն են դարձրել քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությանը, և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից մշտադիտարկվող լրատվամիջոցները կանոնավոր լուսաբանել են բոլոր թեկնածուներին: Նրանք ավելի շատ են լուսաբանել Սերժ Սարգսյանին և Բաֆֆի Հովհաննիսյանին՝ արտացոլելով նրանց քարոզչական գործունեության մեծ մասը: Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն կատարել են մրցակիցներին անվճար եթերաժամ և հավասարակշիռ լուսաբանում տրամադրելու իրենց պարտավորությունը, և բոլոր թեկնածուները օգտագործել են իրենց անվճար եթերաժամը: Քարոզարշավի լուսաբանումը հիմնականում ֆորմալ բնույթ էր կրում և չունեւ վերլուծական մեկնաբանություն, և թեկնածուների միջև բանավեճեր չեն կազմակերպվել:

Ընտրական հանձնաժողովները և դատարանները ստացել են սահմանափակ թվով բողոքներ: Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է բողոք ներկայացնելու այն անձանց իրավունքը, ում ընտրական իրավունքները վտանգված են՝ էապես սահմանափակելով ընտրողների և դիտորդների իրավունքը դիմելու դատական պաշտպանության ընտրական իրավունքների խախտման դեպքում: Ընտրական իրավունքների վերաբերյալ դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն, ինչը սահմանափակում է արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը:

Ընտրական գործընթացը անցել է հանդարտ և լավ կազմակերպված այցելած ընտրական տեղամասերի մեծամասնությունում: Մի շարք ընտրատեղամասերում դիտարկվել է ոչ հարիր միջամտություն ընտրական ընթացքի վրա՝ հիմնականում գործող նախագահի վստահված անձանց կողմից, և որոշ դեպքերում լուրջ խախտումներ՝ ներառյալ ճնշում ընտրողների վրա: Ընտրողների անձնագրերը կնքելու թանաքը թերի էր, քանի որ այն հեշտությամբ մաքրվում էր ընտրողների անձնագրերից: Դիտարկված ձայների հաշվարկման մեծ մասը գնահատվել է դրական՝ չնայած նշվել են թերություններ և ընթացակարգային խախտումներ: Արդյունքների աղյուսակավորումը գնահատվել է դրական բոլոր 41 ԸԸՀ-ներում բացի մեկից, սակայն դիտորդներին խոչընդոտել են

դիտարկել արդյունքների համակարգչային մուտքագրումը 12 դեպքերում: ԿԸՀ-ն հայտարարել է ընտրողների նախնական մասնակցության թիվը՝ 61.2 տոկոս:

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Նախապատմություն

Մահմանադրական դրույթներին համապատասխան 2012 թ. դեկտեմբերի 8-ին ԿԸՀ-ն ՀՀ Նախագահի ընտրությունները նշանակել է փետրվարի 18-ին: 2008 թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած վերջին նախագահական ընտրություններում հաղթել էր Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) թեկնածու Սերժ Սարգսյանը՝ ստանալով քվեների 52.8 տոկոսը: Սարգսյանի հիմնական մրցակիցը՝ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ստացել էր քվեների 21.5 տոկոսը: Ընտրությունների արդյունքները բողոքարկվել են, և Տեր-Պետրոսյանի կողմնակիցները կազմակերպել են բողոքի ցույցեր: Ոստիկանության և ցույցերի մասնակիցների բախումների արդյունքում տաս մարդ զոհվել են, և մոտ 200 մարդ վիրավորվել:

Վերջին խորհրդարանական ընտրությունները կայացել են 2012 թ. մայիսի 6-ին: Գործող Նախագահի գլխավորած Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացել է 131 պատգամավորական մանդատից 69-ը: Ազգային ժողովում ներկայացված այլ կուսակցություններն են՝ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ, 37 մանդատ), Հայ ազգային կոնգրես դաշինքը (ՀԱԿ, 7 մանդատ), Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ, 6 մանդատ), Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ, 6 մանդատ) և Ժառանգություն կուսակցությունը (5 մանդատ): Հայաստանի Հանրապետական և Օրինաց երկիր կուսակցությունները կազմում են ներկայիս կոալիցիոն կառավարությունը:

Ընտրական համակարգ և իրավական դաշտ

Նախագահը ընտրվում է բացարձակ մեծամասնական ընտրակարգով՝ հինգ տարվա ժամկետով: Առաջին փուլում Հանրապետության Նախագահ ընտրվում է այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի բացարձակ մեծամասնությունը: Այլապես, առաջին փուլից երկու շաբաթ անց նախագահի ընտրությունների երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում ձայների առավելագույն քանակը ստացած թեկնածուն ընտրվում է երկրի նախագահ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել հանրապետության նախագահի պաշտոնում:

Այս ընտրությունները առաջին նախագահական ընտրություններն են, որոնք անցկացվել են 2011 թ. մայիսին ընդունված նոր Ընտրական օրենսգրքի համաձայն:¹ Նոր Օրենսգրքը անդրադառնում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից նախկինում արված մի շարք առաջարկությունների և գնահատվել է որպես համապարփակ և ժողովրդավարական ընտրությունների անցկացման հաստատուն հիմք:² Բարելավվել է ընտրական ցուցակների մատչելիությունը, ընտրական հանձնաժողովներում գենդերային չափանիշի ներմուծումը, ինչպես նաև քարոզչության ավելի թափանցիկ ֆինանսավորումը: Միաժամանակ, որոշ թերություններ դեռևս առկա են, այդ թվում՝ ավելի հեշտությամբ թեկնածուին գրանցումից հանելու գործընթացը, պետական և կուսակցական համակարգերի ոչ բավարար բաժանումը, տեղական դիտորդների հավատարմագրման համար ավելորդ խոչընդոտները, բողոքների և դիմումների ոչ արդյունավետ ընթացակարգը:³

Խորհրդարանական ընտրություններից հետո Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է կառավարության ներկայացուցիչներից և այլ պետական պաշտոնյաներից բաղկացած աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է ուսումնասիրել առաջարկությունները՝ ներկայացված ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցում, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպությունների կողմից, և պատրաստել գործողությունների ծրագիր՝ նշված առաջարկություններն իրականացնելու համար: 2012 թվականի հոկտեմբերին աշխատանքային խմբի գործունեության արդյունքները ներկայացվել են ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ին, որն առաջարկել է գերծ մնալ օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ կատարելուց առաջիկա ընտրությունների նախաշեմին դրական ընտրական փորձի համաձայն:⁴

Սահմանադրությունը երաշխավորում է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ հիմնարար իրավունքները և ազատությունները: Թեկնածուների առաջադրման համար սահմանված 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջներն ավելի քան խիստ են: Բոլոր դատապարտյալներին

¹ Ընտրություններին առնչվող օրենսդրական այլ փաստաթղթերի շարքում են Սահմանադրությունը (2005 թ.), Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը (վերջին անգամ փոփոխված 2012 թ.) և Հավաքների ազատության մասին նոր օրենքը (2011 թ.). 2011 թվականին փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների օրենսգրքում և Քրեական օրենսգրքում, ըստ որի բարձրացվել են ընտրությունների ժամանակ կատարված իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը և ազատազրկման ժամկետները, ինչպես նաև սահմանվել են ընտրությունների հետ կապված լրացուցիչ իրավախախտումներ:

² Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը 2011 թ. Ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ կարծիք են հրապարակել, տես՝ <http://www.osce.org/odihr/elections/84269>

³ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի վերաբերյալ և 2012 թվականին կայացած խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցը, տես՝ <http://www.osce.org/odihr/91643>

⁴ Տես՝ Վենետիկի հանձնաժողովի «Դրական ընտրական փորձի» կանոններ, II.2.b, [http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-EL\(2002\)005-e.aspx](http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-EL(2002)005-e.aspx).

ընտրելու իրավունքից զրկելը՝ անկախ գործած հանցագործության ծանրությունից, հակասում է համընդհանուր ընտրական իրավունքին և այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախատեպային իրավունքին:⁵

Ընտրական գործընթացների կազմակերպում

Նախագահական ընտրությունների անցկացման նպատակով կազմավորվել էր ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (ԸԸՀ) և 1,988 Տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ):

Ներկա ԿԸՀ-ն կազմավորվել է 2011 թ-ին և ունի յոթ անդամ, որոնց նշանակել է Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի՝ առաջարկությամբ: Յուրաքանչյուր ԸԸՀ-ն ունի յոթ անդամ, որոնց նշանակում է ԿԸՀ-ն՝ անդամության համար ինքնառաջադրված քաղաքացիներից: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է գենդերային չափանիշ ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի կազմի համար, ըստ որի հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է լինի երկուսից պակաս: ԿԸՀ-ի անդամներից երեքը, ԸԸՀ-ների անդամների 32 տոկոսը և ԸԸՀ-ների նախագահների 10 տոկոսը կանայք էին:

Յուրաքանչյուր ՏԸՀ-ի երկու անդամները նշանակվում են համապատասխան ԸԸՀ-ի կողմից, մինչդեռ Ազգային ժողովում ներկայացված յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք կարող է նշանակել ՏԸՀ-ի մնացած վեց անդամներից մեկին: Նշանակվելու համար ՏԸՀ-ների անդամները պարտավոր էին հանձնել ստուգարք և ստանալ ԿԸՀ-ի որակավորման վկայագիր: ՏԸՀ-ները ձևավորվել են մինչև հունվարի 24-ը՝ օրենքով սահմանված ժամկետում: Բոլոր ԸԸՀ-ները, ինչպես նաև ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՕԵԿ-ը առաջադրել են անդամներ բոլոր ՏԸՀ-ներում, մինչդեռ ՀԱԿ-ը, Ժառանգությունը և ՀՅԴ-ն

⁵ 1990 թ. ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 7.3 պարբերությունը սահմանում է, որ Մասնակից երկրները «կերաշխավորեն ընդհանուր և հավասար ընտրական իրավունք բոլոր չափահաս քաղաքացիներին», մինչդեռ 24 պարբերությունը նախատեսում է, որ իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է «խստիվ համապատասխանեն օրենքի նախանշմանը»: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 25-րդ հոդվածի վերաբերյալ 25-րդ Ընդհանուր մեկնաբանության (1966) 14-րդ պարբերությունը սահմանում է, որ ընտրական իրավունքի սահմանափակումների պատճառները պետք է լինեն «օբյեկտիվ և ողջամիտ», տես՝ <http://www.unhcr.ch/tbs/doc.nsf/%28symbol%29/bb722416a295f264c12563ed0049dfbd?opendocument> Կենետիկի հանձնաժողովի «Դրական ընտրական փորձի» կանոնները սահմանում են, որ ընտրական իրավունքի զրկումը պետք է հիմնված լինի «ծանր հանցագործության համար քրեական դատապարտման» վրա և առաջարկում է, որ «քաղաքական իրավունքների բացառումը պետք է կատարվի միայն դատարանի հստակ վճիռով», տես նաև՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, Հիբստը ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 74025/01 (6 հոկտեմբերի, 2005), www.echr.coe.int

չեն լրացրել իրենց տրված թափուր տեղերը 457, 65 և 51 ՏՀ-ներում համապատասխանաբար:⁶ Համապատասխան ԸՀ-ների նախագահները լրացրել են թափուր տեղերը՝ ըստ օրենքով սահմանված դրույթների: ՏՀ անդամների 48 տոկոսը, ինչպես նաև այցելացած տեղամասերի նախագահների 32 տոկոսը կանայք էին:

ԿՀ-ի և ԸՀ-ների նախագահներին, տեղակալներին և քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից: ՏՀ-ի նախագահ և քարտուղար նշանակվում են համապատասխան ԸՀ-ի որոշմամբ՝ Ազգային ժողովում պատգամավորական մանդատներ ունեցող կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչների միջև՝ նրանց մանդատների համապատասխան: ԸՀ-ները և ՏՀ-ները հիմնականում լավ կահավորված են, թեև ինչպես ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներն են նշել, որոշ դեպքերում նրանց տարածքները եղել են անհարմար կամ չափից դուրս փոքր:

ԿՀ-ն և ԸՀ-ները անցկացրել են ընտրությունների վարչարարական նախապատրաստումը արհեստավարժորեն և ըստ օրենքով սահմանված վերջնաժամկետների: ԿՀ-ն հաստատել է հիմնական ընթացակարգային կանոնները և ուղեցույցը, այդ թվում ընտրությունների օրը ընտրողների անձնագրերը դրոշմակնքելը և դարձրել է դրանք հասանելի՝ տեղադրելով իր կայքում ընտրություններից բավական ժամանակ առաջ: Այն հարցը, թե արդյոք թեկնածուները կարող են տրամադրել անվճար փոխադրամիջոցներ ընտրողներին ընտրությունների օրը չի քննարկվել ԿՀ-ի կողմից, մինչդեռ այսպիսի խնդիր չի առաջացել ընտրությունների օրը: ԿՀ-ն նաև չի սահմանել այն կանոնները, ըստ որոնց այն թեկնածուները, ովքեր ինքնաբացարկ են հայտնել պարտավոր էին փոխհատուցել իրենց նախընտրական քարոզարշավի ընթացքում պետության կողմից կատարված անվճար հեռարձակման եթերաժամի ծախսերը:

Դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամների համար կազմակերպվել է քվեարկություն համացանցի միջոցով:⁷

ԿՀ-ն աշխատել է բաց և թափանցիկ՝ տրամադրելով իր նիստերի վերաբերյալ տեղեկատվություն և մուտք ապահովելով թեկնածուներին, թեկնածուների վստահված

⁶ Այն կուսակցությունները, որոնք չեն համալրել ՏՀ-ներում իրենց տրված չափանիշը, ցուցաբերել են քիչ հետաքրքրություն անդամներ չառաջադրելու պատճառով, ռեսուրսների և որոշ համայնքներում բնակվող կուսակցության աջակիցների սակավություն, ինչպես նաև չեն ցանկացել մասնակցել, ինչպես իրենք են անվանում, «անարդար ընտրություններում»:

⁷ Ընտրական օրենսգրքի 60.1 հոդվածը սահմանում է, որ «Քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են մասնակցել համապետական ընտրություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ժամկետներում:» Այս խմբում ընդգրկված 243 ընտրողներից 228 օգտագործել են քվեարկության այս ձևը:

անձանց, դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Փետրվարի 1-ից ԿԸՀ-ի նիստերը նաև հեռարձակվել են ուղիղ եթերով ԿԸՀ-ի կայքով: Մի քանի միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ԿԸՀ-ն հեռուստատեսությամբ հեռարձակել է ընտրողների իրազեկմանն ուղղված տեսահոլովակներ, ինչպես նաև պատրաստել է տեղեկատվական նյութեր ընտրական գործընթացի տարբեր հարցերի շուրջ, այդ թվում նաև սահմանափակ կարողություններով անձանց համար:

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ ԿԸՀ-ն կազմակերպել է դասընթացներ ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների անդամների համար, այդ թվում բողոքների ընթացակարգերի վերաբերյալ: ՏԸՀ-ների մասնագիտական դասընթացները կազմակերպվել են բոլոր մարզերում և դրական են գնահատվել ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդների կողմից:

Թեկնածուների գրանցում

Թեկնածուների գրանցումը եղել է ներառական կերպով: Թեկնածուները կարող են առաջադրվել քաղաքական կուսակցությունների կողմից կամ ինքնաառաջադրվել: Մինչև հունվարի 4-ը 15 քաղաքացիներ առաջադրման դիմումներ են ներկայացրել ԿԸՀ: Մեկ առաջադրված նախագահի թեկնածու ինքնաբացարկ է հայտնել, և վեցը չեն գրանցվել 8 մլն ՀՀ դրամ կազմող ընտրական գրավը (մոտ 14,700 եվրո) չվճարելու պատճառով:⁸ ԿԸՀ-ն գրանցել է ութ թեկնածուներ, որոնք ներկայացրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը և վճարել են ընտրական գրավը:⁹ Փետրվարի 8-ին թեկնածուներից մեկը՝ Արամ Հարությունյանը ինքնաբացարկ է հայտնել հույս հայտնելով, որ բոլոր թեկնածուները, բացի գործող նախագահից, ինքնաբացարկ կհայտնեն՝ այս կերպ դարձնելով ընտրությունները ոչ օրինական:

Երեք առաջադրված անձանց Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ) չի տրամադրել պահանջվող բնակության տեղեկանք: Ընտրական օրենսգիրքը չի սահմանում, թե ինչպես է 10 տարվա մշտական բնակության ժամանակահատվածը հաշվարկվում: ԱՎՎ-ն հայտնել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ տրամադրել է 10 տարվա մշտական բնակության տեղեկանքը միայն այն թեկնածուներին, ովքեր չեն բացակայել Հայաստանից 6 ամսից ավել վերջին տաս

⁸ Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածը սահմանում է ընտրական գրավի չափը նախագահի թեկնածուների համար: Ընտրական գրավը չի վերադարձվում, բացի այն դեպքից երբ թեկնածուն ստացել է կողմ քվեարկված քվեաթերթիկների առնվազն 5 տոկոսը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի Համատեղ կարծիքի 36-րդ պարբերությունը նախատեսում է, որ «ընտրական գրավի չափը կարևոր է, քանի որ ընտրական գրավը չպետք է հանդիսանա վիճարկելի խոչընդոտ թեկնածու դառնալու համար»: Համատեղ կարծիքը բազմիցս նշում է, որ «ընտրական գրավի չափը պետք է զգուշությամբ սահմանել, քանի որ յուրաքանչյուր քաղաքացուն պետք է տալ իր թեկնածությունը առաջադրելու հնարավորություն»: Տես նաև՝ Բողոքների և դիմումների բաժինը:

⁹ Գրանցված թեկնածուներն էին՝ Հրանտ Բագրատյանը, Անդրիաս Ղուկասյանը, Արամ Հարությունյանը, Պարույր Հայրիկյանը, Բաֆֆի Հովհաննիսյանը, Արման Մելիքյանը, Մերժ Սարգսյանը և Վարդան Մեդրակյանը:

տարվա ընթացքում: Սա ամրագրված է ՀՀ Բնակչության Պետական Ռեզիստրի մասին Օրենքի 7-րդ հոդվածում¹⁰ և կարող է լինել չափից դուրս սահմանափակող, քանի որ հակասում է միջազգային չափանիշներին և դրական ընտրական փորձին:¹¹

Ընտրողների գրանցում

Ընտրողների գրանցումը պասիվ է և կազմվում է բնակչության պետական ռեզիստրի հիման վրա: ԱՎՎ-ն պատասխանատու է ընտրողների համապետական էլեկտրոնային ռեզիստրի մշտական վարման համար և տրամադրում է ընտրողների թարմացված ռեզիստրը ԿԸՀ-ին: Ընտրացուցակները կազմվել են ընտրողների ռեզիստրի հիման վրա և ընտրողների նախնական ցուցակները հասանելի էին հանրությանը՝ օրենքով սահմանված ժամկետներում: Ընտրացուցակների վերջնական տարբերակը հրապարակվել է առցանց ԱՎՎ-ի կողմից և փակցվել ընտրատեղամասերում փետրվարի 16-ին: Ընտրական հատուկ ցուցակներ են կազմվել զինվորական անձնակազմի, կալանավայրերում նախնական կալանքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության աշխատակազմի համար, որոնք չեն գտնվել իրենց բնակության վայրում: Ընտրությունների օրը ընտրողների գրանցումը հնարավոր է եղել ԱՎՎ-ի կողմից տեղեկանքի կամ դատարանի վճիռների հիման վրա, և 14,293 ընտրողներ օգտվել են այդ հնարավորությունից:

Հունվարի 8-ին օրենքով սահմանված կարգով թափանցիկությանը նպաստելու նպատակով և ընտրողների գրանցման վերաբերյալ հանրության վստահությունը բարձրացնելու նպատակով ընտրողների ռեզիստրի թվային և որոնման համակարգով հազեցած տարբերակը տեղադրվել է ԿԸՀ-ի կայքում: ԿԸՀ-ն ներկայացրել է ընտրողների ռեզիստրի որոնման համակարգի նոր հնարավորություն, որի շնորհիվ ընտրողները կարող են ստուգել ինչպես իրենց անձնական, այնպես էլ նույն հասցեում գրանցված մյուս ընտրողների տվյալները:

Ոստիկանությունը գործարկել է «Թեժ գիծ» և ԿԸՀ-ի հետ համատեղ իրականացրել է ընտրողների իրազեկում լրատվամիջոցներով: Ոստիկանությունը կազմակերպել է «դռնեղու» ստուգայցեր՝ հայտնաբերելու մեծ թվով գրանցված ընտրողների հասցեներ, սխալ հասցեներ, ինչպես նաև քանդված շինություններ, որտեղ դեռևս առկա են

¹⁰ Օրենքի 7.2 հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող ՀՀ քաղաքացին պարտավոր է այս մասին գրավոր ձևով տեղեկացնել համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկին...»

¹¹ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 25-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրական իրավունքի սահմանափակումների պատճառները պիտի լինեն «օբյեկտիվ և հիմնավորված»: Տես նաև՝ ՔՔԻՄԴ-ի 15-րդ հոդվածը: Վենետիկի հանձնաժողովի (1.1.c.ii և iv) «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնները սահմանում են, որ «բնակչության երկարատևության պահանջը կարող է հարկադրվել քաղաքացիների վրա միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում» և «այս դեպքում բնակչությունը նշանակում է մշտական բնակչություն»

գրանցված քաղաքացիներ: ԱՎԿ-ն հրապարակել է ամսեկան տեղեկագրեր իր աշխատանքների մասին:

Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակներում ներդրվել է մեկնարկային էլեկտրոնային ներցանցային համակարգ, որը կապակցված է ԲՊՌ-ի հետ՝ տրամադրելու ճշգրտված ծանուցում և տվյալների փոխանակման մեխանիզմ: Ձեռնարկված տարբեր միջոցները նպաստել են ԲՊՌ-ի աշխատանքների և ընտրացուցակների բարելավված որակին: Նախքան ընտրությունները գրանցվել էր 2,505,980 ընտրող:

Նախագահի որոշ թեկնածուներ բարձրաձայնել են իրենց մտահոգությունները ընտրացուցակների վերաբերյալ պնդելով, որ գրանցված ընտրողների թիվը չափազանց ուռճացված է և կարող է օգտագործվել արտերկրում բնակվող ընտրողների փոխարեն քվեարկության համար, սակայն նրանք որևէ ապացույց չեն տրամադրել՝ իրենց տեսակետը պաշտպանելու համար մինչև ընտրությունների օրը:¹²

Քարոզչության միջավայր և քարոզչության ֆինանսավորում

Քարոզարշավը բնութագրվել է հիմնարար ազատությունների նկատմամբ ընդհանուր հարգանքի դրսևորմամբ, և մրցակիցները կարողացել են անխոչընդոտ իրականացնել իրենց քարոզչությունը: Քարոզարշավը զուսպ էր և անցկացվել է ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի և ՀՅԴ-ի թեկնածու չառաջադրելու որոշման պայմաններում:¹³ Ութ թեկնածուներից միայն գործող նախագահն է առաջադրվել խորհրդարանական կուսակցության կողմից:¹⁴ Իր քարոզարշավը ամենանկատելիին էր և ընդգրկել էր մի շարք հանրահավաքներ և փակ տարածքներում միջոցառումներ երկրի ողջ տարածքում: Մյուս թեկնածուներից չորսը նույալես անցկացրել են քարոզչություն մարզերում: Թեկնածուները, իրենց քաղաքական ներկայացուցիչները և ընտրողները ակտիվորեն օգտվել են առցանց լրատվամիջոցներից և սոցիալական ցանցերից, մասնավորապես Facebook-ից: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից դիտարկված 57 հանրահավաքներից 36-ը կազմապերպվել են ի սատարում գործող նախագահի: Հանրահավաքների մասնակիցների մոտ 40 տոկոսը եղել են կանայք:

¹² Որոշ քաղաքական կուսակցություններ (ՀԱԿ-ը և Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ)) նույնպես հաղորդել են իրենց մտահոգությունները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ընտրական ցուցակների ճշգրտության և հնարավոր շահարկման վերաբերյալ:

¹³ Ֆինանսական միջոցների սակավության, ընտրական գործընթացի նկատմամբ վստահության բացակայության և իր տարիքի պատճառներով ընտրություններին չմասնակցելու պարոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունից հետո ՀԱԿ-ը չի առաջադրել այլ թեկնածու: ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն չեն պատճառաբանել թե ինչու չեն առաջադրել թեկնածուներ:

¹⁴ Կուսակցության կողմից առաջադրված մյուս թեկնածուն Հրանտ Բագրատյանն է (Ազատություն կուսակցությունը, որը ՀԱԿ-ի անդամ է). Պրնք. Հովհաննիսյանը (Ժառանգություն) և Հայրիկյանը (ԱԻՄ) գլխավորում են իրենց կուսակցությունները՝ համապատասխանաբար, թեպետ երկուսն էլ մասնակցել են ընտրություններին ինքնաառաջադրմամբ:

Պարոն Սարգսյանի քարոզարշավը ընդգրկում էր նախընտրական շտաբների և ՀՀԿ-ի գրասենյակների լայն ցանց, որը նաև օգտագործվում էր գործող նախագահի քարոզչության համար: Ըստ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ՀՀԿ-ի տրամադրած տեղեկատվության, ողջ երկրի տարածքում (բացի Երևանից) գործում էին գործող նախագահի 1,186 նախընտրական շտաբներ: Մյուս թեկնածուները կամ ունեին սահմանափակ քանակով նախընտրական շտաբներ մեծ քաղաքներում կամ ընդհանրապես չունեին:

Բոլոր թեկնածուները, բացի գործող նախագահից, մտահոգություններ են արտահայտել ընտրական գործընթացի ամբողջականության, ընտրացուցակների անճշտությունների և վարչական ռեսուրսի չարաշահման կապակցությամբ:¹⁵

Քարոզարշավի կանոնակարգումները չեն ապահովել բավարար պաշտպանություն վարչական ռեսուրսի չարաշահումից և չեն նպաստել պետության և իշխող կուսակցության միջև հստակ բաժանմանը: Այս փաստը կասկածի տակ է դնում պետության և քաղաքական կուսակցության բաժանման հարցը՝ ամրագրված ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերության մեջ:¹⁶ Հանրային կառավարման անկողմնակալության բացակայությունը նույնպես հակասել է նույն փաստաթղթի 7.7 պարբերությանը:¹⁷

Երևանում և 10 մարզերից 8-ում ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները փաստել են վարչական ռեսուրսի չարաշահման դեպքեր ի օգուտ գործող նախագահի:¹⁸ Դա արտահայտվել է հետևյալ ձևերով՝ վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով,¹⁹

¹⁵ Երբ ԿԸՀ-ն մերժել է գործող նախագահի թեկնածությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ իր պահանջը, պարոն Ղուկասյանը հայտարարել է հացադուլ ամբողջ քարոզարշավի ընթացքում: Հունվարի 28-ին պրնք. Բագրատյանը, Հայրիկյանը և Հովհաննիսյանը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ նրանք կոչ են արել ստեղծել արդար և հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար և հորդորել են քաղաքացիներին վճռականորեն մասնակցել ընտրություններին:

¹⁶ 5.4 պարբերությունը նախատեսում է «հստակ բաժանում պետության և քաղաքական կուսակցությունների միջև: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չեն կարող միավորվել պետության հետ»:

¹⁷ 7.7 պարբերությունը նախատեսում է, որ Մասնակից երկրները «որ օրենքն ու պետական քաղաքականությունը թույլ տան քաղաքական համաշարժումների անցկացում ազատության ու ազնվության մթնոլորտում, ոչ մի վարչական գործողություն, բռնություն կամ ահաբեկում կուսակցություններին ու թեկնածուներին հետ չեն պահի իրենց հայացքներն ու գնահատականներն ազատորեն շարադրելուց, ինչպես նաև ընտրողներին չեն խանգարի ծանոթանալ դրանց և քննարկել դրանք կամ քվեարկել ազատորեն, երկյուղ չկրելով պատժից»:

¹⁸ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Երևանի մի քանի համայնքներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են վարչական ռեսուրսների օգտագործման դեպքեր:

¹⁹ 13 նմանատիպ դեպքեր են դիտարկվել Երևանում և Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում:

պետական ծառայողների ներգրավում ընտրական քարոզարշավին,²⁰ նախընտրական շտաբների տեղակայում այն շինություններում, որտեղ նաև գտնվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և ընտրական հանձնաժողովները, պետական միջոցների օգտագործում քարոզչության նպատակով:²¹

Ընտրական օրենսգրքի համաձայն նախընտրական շտաբները չեն կարող գտնվել այն շինություններում, որտեղ գտնվում են ընտրական հանձնաժողովները կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ այն դեպքերի, երբ նմանատիպ շինություն զբաղեցնող տարածքը չի պատկանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները գեկուցել են մի քանի դեպքերի մասին, երբ գործող նախագահի կամ ՀՀԿ-ի շտաբները գտնվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների²² զբաղեցրած շենքերում կամ ընտրական հանձնաժողովների հետ մեկտեղ:²³ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հայտնել են նաև, որ ՀՀԿ-ի և գործող նախագահի նախընտրական շտաբները գտնվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող շինություններում:²⁴

Պետական և հանրային ծառայողներ ընդգրկված են եղել գործող նախագահի քարոզչական գործընթացում:²⁵ Թեև նրանք գտնվում են արձակուրդում, նրանց մեծ քանակը նպաստել է պետության և քաղաքական կուսակցության, ինչպես նաև պաշտոնական և քարոզչական գործառույթների բաժանման աղճատմանը:²⁶

²⁰ 16 նմանատիպ դեպքեր են դիտարկվել Երևանում և Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում:

²¹ 11 նմանատիպ դեպքեր են դիտարկվել Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերում:

²² 13 նմանատիպ դեպքեր են դիտարկվել Երևանում և Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում:

²³ Նման 4 դեպքեր են դիտարկվել Արագածոտնի և Արմավիրի մարզեր այցելության ժամանակ:

²⁴ Նման դեպքեր դիտարկվել են հետևյալ մարզերում՝ Արմավիր (քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող շախմատի դպրոցում, թանգարանում և հյուրանոցում), Սյունիք (գյուղական պոլիկլինիկայում), Վայոց Ձոր և Երևան (հանրային գրադարաններում), Արագածոտն, Կոտայք և Սյունիք (հինգ Սշակույթի տներում), և Կոտայք, Լոռի և Շիրակ (դպրոցի սեփականություն հանդիսացող երեք շինություններում և դպրոցում նույնպես):

Հունվարի 20-ին Ազատություն Ռադիոկայանի հետ հարցազրույցում Պարոն Սարգսյանը հայտնել է «...Մարդիկ այնտեղ էլ քաղաքական պայքար են մղել և ղեկավար դիրք են ստացել: Իսկ ինչո՞ւ իրենց այդ ղեկավար դիրքը, ես նկատի ունեմ իրենց հեղինակությունը, եւ ոչ թե ակումբ տրամադրելու կամ չտրամադրելու հնարավորությունը, չպիտի օգտագործեն հանուն իրենց կուսակցության, կամ իրենց կուսակցության թեկնածուի հաղթանակը ապահովելու:», տես <http://www.azatutyun.am/content/article/24878424.html>

²⁶ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության համաձայն տաս մարզպետներից ինը վերցրել են արձակուրդ՝ քարոզչություն իրականացնելու նպատակով:

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸՂԱ երկարաժամկետ դիտորդները մատնանշել են Ընտրական օրենսգրքի մի քանի խախտումներ մարզային կամ համայնքային ծառայողների կողմից, ովքեր անցկացնում էին քարոզչություն իրենց լիազորությունները կատարելիս:²⁷

Հունվարի 31-ին նախագահի թեկնածու և ԱԻՄ-ի ղեկավար Պարույր Հայրիկյանը ստացել էր հրազենային վնասվածք: Փետրվարի 7-ին երկու կասկածյալներ ձերբակալվել էին: Չնայած փետրվարի 5-ին պարոն Հայրիկյանը հայտարարել էր, որ չի դիմելու Սահմանադրական դատարան ընտրությունները հետաձգելու նպատակով, սակայն փետրվարի 10-ին ներկայացրել էր դիմում, որը հետ էր վերցրել հաջորդ օրը:

Նոր Ընտրական օրենսգիրքը կարող է արդյունավետ լինել ամբողջականության ապահովման և քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը մեծացնելու հարցում, եթե այն ճիշտ կիրառվի:²⁸ Ըստ օրենքի, թեկնածուները պետք է իրենց ընտրությունների հետ կապված բոլոր ծախսերը կատարեն Հայաստանի Կենտրոնական բանկում բացված հատուկ բանկային հաշվի միջոցով: Այնուամենայնիվ, մի թեկնածու ընդհանրապես չի բացել նման հաշիվ, և ԿԸՀ-ն գտնում է, որ դա անհրաժեշտ չէ, քանի որ թեկնածուն չէր կատարել որևէ գործարք: Ոչ մի իրավական պատժամիջոց առկա չէ հաշիվ չբացելու համար: Մինչդեռ Ընտրական օրենսգիրքը տարածքների վարձակալումը նշում է որպես քարոզչական ծախս, ԿԸՀ-ն որոշում էր կայացրել, ըստ որի նախընտրական շտաբների վարձակալությունը հանվել էր ծախսերի ցուցակից, որոնք պետք է ընգրկվեին թեկնածուների ֆինանսական հայտարարագրերում:²⁹ Այլ ծախսեր, ինչպիսին օրինակ նախընտրական շտաբներում աշխատակիցների վարձատրությունը, նույնպես չի ընդգրկվել քարոզչական ծախսերի շարքում և չի հայտարարագրվել թեկնածուների կողմից:

Բոլոր թեկնածուները ներկայացրել են իրենց մուտքերի և ծախսերի հայտարարագրերը գրանցումից հետո, բայց ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերաքննիչ ծառայությունը (ՎՎԾ) հայտարարագրված տվյալների իսկությունը ստուգելու իրավասություն չունի: Պարոն Մելիքյանը չի բացել նախընտրական հիմնադրամի հաշիվ և չի ներկայացրել ֆինանսական հայտարարագրեր, թեպետ նրա նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվել, քանի որ նման միջոցներ նախատեսված չեն: Կենտրոնական բանկը ներկայացրել է ՎՎԾ-ին զեկույցներ թեկնածուների նախընտրական հիմնադրամների

²⁷ Օրինակ, Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Երևանում:

²⁸ Թեկնածուները կարող են իրենց քարոզարշավը ֆինանսավորել իրենց սեփական (մինչև 5 մլն դրամ՝ մոտ 9250 եվրո) և ընտրողների կամավոր նվիրատվությունների միջոցներով (մինչև 100 000 դրամ, մոտ 185 եվրո յուրքանաչյուր ընտրողից): Կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուները կարող են իրենց առաջադրած կուսակցություններից ստանալ մինչև 25 մլն դրամ (մոտ 46 300 եվրո). Նախագահի թեկնածուն քարոզարշավի համար կարող է ծախսել առավելագույնը 100 մլն դրամ (մոտ 185 000 եվրո). Անանուն աղբյուրներից, օտարերկրա ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացած նվիրատվությունները թեկնածուներին չեն թույլատրվում:

²⁹ 2012 թվականի փետրվարի 16-ի ԿԸՀ-ի թիվ 33 որոշում ՀՀ Ընտրական օրենսգրքի հոդված 26-ի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով պաշտոնական պարզաբանման մասին

վերաբերյալ յուրաքանչյուր երեք աշխատանքային օրը մեկ: Այնուամենայնիվ, այս զեկույցները ամբողջական չեն եղել, քանի որ պարունակել են տեղեկատվություն միայն մուտքերի և ծախսերի ընդհանուր թվի վերաբերյալ, բայց ոչ հիմնադրամի աղբյուրների և յուրաքանչյուր մուծման չափի մասին: Թեկնածուների և բանկերի տրամադրած հաշվետվությունների ստուգումից և ԿԸՀ-ում դրանց ներկայացումից հետո, բոլոր հաշվետվությունները հրապարակվել են ԿԸՀ-ի կայքում՝ ՎՎԾ-ի հայտարարությունների հետ մեկտեղ:³⁰

Լրատվամիջոցներ

Տեղեկատվության ամենակարևոր աղբյուրը հեռուստատեսությունն է, հատկապես մարզերում: Հանրային Հ1 հեռուստաալիքը, որն ունի համապետական սփռում, համարվում է ամենաազդեցիկ լրատվամիջոցներից մեկը: Մինչ տպագիր լրատվամիջոցների ազդեցությունն անկում է ապրում, առցանց լրատվամիջոցների, այդ թվում նաև՝ քաղաքական ուղղվածության ինտերնետային կայքերի ընթերցողների շրջանակը արագորեն աճում է: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ հանդիպումներում զրուցակիցները ողջունել են առավել ազատ լրատվական միջավայրի գոյությունը և հատկապես համացանցում առկա տեղեկատվության բազմազանությունը: Սակայն, նրանք նաև մատնանշել են որոշ հարատևող խնդիրներ, այդ թվում նաև ինքնագրաքննությունը և խմբագրական անկախության վրա ազդող լրատվամիջոցների սեփականության հարցը:³¹

Ըստ օրենքի՝ հանրային և մասնավոր լրատվամիջոցները պարտավոր են իրենց լրատվական հաղորդումներում ներկայացնել անաչառ և անկողմնակալ տեղեկատվություն մրցակից թեկնածուների մասին և ապահովել հավասար և արդարացի պայմաններ: Յուրաքանչյուր թեկնածուի տրամադրվել է համապատասխանաբար 60 և 120 րոպե անվճար եթերաժամանակ Հանրային հեռուստատեսությամբ և Հանրային ռադիոյով: Երկու հեռարձակողներն էլ կատարել են օրենքով նախատեսված իրենց պարտավորությունը: Բոլոր թեկնածուներն օգտագործել են իրենց տրամադրված անվճար եթերաժամանակը³²: Հ1 հեռուստաընկերությունը

³⁰ Ըստ հայտարարագրված և հրապարակված տեղեկատվության փետրվարի 13-ի դրությամբ պարուն Սարգսյանը և պարուն Հովհաննիսյանը ստացել են 102 և 82 մլն ՀՀ դրամ (188,000 և 151,000 եվրո)՝ համապատասխանաբար և ծախսել են 84,000 և 58,000 մլն ՀՀ դրամ (156,000 և 108,000 եվրո)՝ համապատասխանաբար: Մնացած թեկնածուները ստացել են ընդհանուր առմամբ 17,000,000 ՀՀ դրամ (31,000 եվրո) և ծախսել են ընդհանուր 16,000,000 մլն ՀՀ դրամ (29,500 եվրո): տես՝ www.elections.am/audit/

³¹ Փետրվարի 12-ին 12 ՀԿ-ներ լրատվամիջոցների դեմ վերջին դատական հայցերի դեպքերը դատապարտող հայտարարությամբ են հանդես եկել՝ կոչ անելով՝ գործարարներին առավել արտադատական լուծումներ փնտրել, դատարաններին՝ ավելի հավասարակշռված մոտեցում և օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները հստակեցնելու համար՝ տես՝ <http://www.a1plus.am/am/politics/2013/02/11/zlm>

³² Պարոն Անդրիաս Դուկայանն իր եթերաժամանակը տրամադրել է քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների, մինչ պարուն Սեդրակյանը քարոզարշավի առաջին 10 օրերի ընթացքում չի օգտագործել [իր] անվճար եթերաժամանակը, հետագայում նույնպես երբեմն տրամադրելով այն քաղաքացիական հասարակության [ներկայացուցիչների]:

հեռարձակել է թեկնածուների քարոզչական տեսահոլովակները երեկոյան ժամը 18:00-ից սկսած՝ հիմնական «փրայմ-թայմից» զգալիորեն շուտ, ինչը տեսականորեն սահմանափակում է դիտողականությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) պարտավորություն ունի վերահսկել լրատվամիջոցների կողմից օրենքի պահանջների կատարումը, այդ թվում՝ լրատվամիջոցների սեփական մշտադիտարկման միջոցով: ՀՌԱՀ-ը ամեն օր մշտադիտարկել է 12 լրատվամիջոց, որոնց թվում՝ 5 հանրապետական նշանակության հեռուստատեսություններ: Մշտադիտարկման մեթոդաբանությունը կենտրոնացել է միայն քանակական վերլուծության վրա՝ շրջանցելով հեռարձակված նյութի ինտոնացիայի գնահատումը: Ի հավելումս, ՀՌԱՀ-ը լիցենզավորված այլ ռադիո և հեռուստաընկերությունների կողմից քարոզարշավի լուսաբանման տվյալները ստացել է հենց հեռարձակողներից և պատահականության սկզբունքով ենթարկել մանրակրկիտ ստուգման: 2012 թ. խորհրդարանական ընտրություններին հաստատված դրական փորձառությունը շարունակելով՝ ՀՌԱՀ-ը ընտրությունների օրը նախորդող ժամանակահատվածում երկու անգամ հրապարակել է իր մշտադիտարկման արդյունքները: Ըստ ՀՌԱՀ-ի՝ լրատվամիջոցների վերաբերյալ բողոքներ չեն եղել:

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ լրատվամիջոցները լուրերի, բազմաթիվ հարցազրույցների և գովազդների միջոցով զգալի ուշադրություն են դարձրել քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությանը:³³

Տեղեկատվության ծավալն աճել է քարոզարշավի պաշտոնական մեկնարկից ի վեր: Մշտադիտարկված հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը (բացառությամբ ԱրմՆյուզ³⁴, Երկիր Մեդիա հեռուստաընկերությունների և Ազատություն ռադիոկայանի) լսարանին առաջարկել են ֆորմալ լրատվական լուսաբանում և չեն տրամադրել քարոզարշավում ներկայացվող ուղերձների վերլուծական մեկնաբանում: Ի հակադրություն սրա՝ առցանց և տպագիր լրատվամիջոցները ներկայացրել են որոշ քննադատական մեկնաբանություն և վերլուծություն: Երևանի Մամուլի ակումբը հեռարձակողներին՝ ներառյալ հանրային հեռուստաընկերությանը, կոչ է արել կազմակերպել բանավեճեր: Որոշ մասնավոր լրատվամիջոցների կողմից բանավեճի առաջարկ եղավ, սակայն թեկնածուները, այդ թվում՝ գործող նախագահը, որոշեցին այդ հնարավորությունից չօգտվել: Արդյունքում ընտրողներին հնարավորություն չի տրվել

³³ Հունվարի 11-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է Հ1 (հանրային հեռուստատեսություն), Հ2, Արմենիա, Շանթ, Կենտրոն և Երկիր Մեդիա (համապետական սփռում ունեցող մասնավոր հեռուստատեսություններ) հեռուստաընկերությունների, հանրային ռադիոյի և Ռադիո Ազատություն (ռադիո ընկերություններ), Հայաստանի Հանրապետություն (պետության կողմից ֆինանսավորվող օրաթերթ), Առավոտ և Հայկական ժամանակ (մասնավոր օրաթերթեր), www.news.am և www.lin.am (համացանցային մամուլ) մամուլի իր քանակական և որակական մշտադիտարկումը:
Հանրային հեռուստատեսության եթերում ներկայացված պարոն Սարգսյանի երկու գովազդային հոլովակում օգտագործվել է ԱրմՆյուզի գլխավոր խմբագրի ձայնը:

մրցակից թեկնածուների նախընտրական ծրագրերի շուրջ բովանդակալից մտքերի փոխանակություն տեսնել:

Մշտադիտարկված լրատվամիջոցները կանոնավոր կերպով լուսաբանել են բոլոր թեկնածուներին: Միննույն ժամանակ պարոն Սերժ Սարգսյանի ու պարոն Բաֆֆի Հովհաննիսյանի մասին լուսաբանումը առավել ծավալուն է եղել, ընդ որում՝ գործող նախագահի մասին լրատվությունը գերիշխող է եղել թվով յոթ, իսկ պարոն Հովհաննիսյանի վերաբերյալ՝ չորս մշտադիտարկվող լրատվամիջոցներում³⁵: Լրատվամիջոցների ուշադրությունը գերազանցապես կենտրոնացած է եղել քարոզարշավային իրադարձությունների վրա: Լրատվամիջոցները նաև լայնորեն լուսաբանել են պարոն Հայրիկյանի վրա կատարված հարձակումը և դրան հաջորդող զարգացումները:

Հանրային Հ1 հեռուստաալիքի և Հանրային ռադիոյի կողմից թեկնածուների լուսաբանումը արտացոլել է տարբեր թեկնածուների ակտիվության տարբեր մակարդակները: Հ1 հեռուստաալիքը առավել լայն լուսաբանում է տրամադրել Սերժ Սարգսյանին և Բաֆֆի Հովհաննիսյանին, որոնք ստացել են ողջ ծավալի համապատասխանաբար 20 և 18 տոկոսը՝ գրեթե բացառապես չեզոք կամ դրական լուսաբանում: Միննույն ժամանակ Հ1-ը հեռուստաալիքի գլխավոր խմբագրի վարած “Տեսանկյուն” վերլուծական հաղորդումներում կողմնակալություն է ցուցաբերել ընդդիմադիր կուսակցությունների և որոշ թեկնածուների նկատմամբ:

Դիմումներ և բողոքներ

Ընտրական հանձնաժողովները և դատարանները ստացել են սահմանափակ թվով բողոքներ: Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է բողոք ներկայացնելու նրանց իրավունքը, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են՝ ըստ էության սահմանափակելով ընտրողների և դիտորդների ընտրական իրավունքների խախտման համար դատական պաշտպանություն ստանալու իրավունքը: Ընտրական իրավունքների վերաբերյալ դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն, ինչը սահմանափակում է արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովում, մինչդեռ ԿԸՀ-ի գործողությունների դեմ ուղղված դիմումները գտնվում են Վարչական դատարանի ընդատության ներքո: Օրենքը թույլատրում է վերադաս հանձնաժողովների և Վարչական դատարանի ընդատության համընկում, քանի որ բողոքատուները կարող են ներկայացնել իրենց

³⁵ Պարոն Սարգսյանն ամենամեծ քաղաքական լուսաբանումն է ստացել Շանթ և Արմենիա հեռուստաալիքներով (համապատասխանաբար 32 տոկոս և 30 տոկոս), մինչդեռ պարոն Հովհաննիսյանը հիմնականում լուսաբանվել է Հ2 և Կենտրոն հեռուստաալիքների կողմից (համապատասխանաբար 29 տոկոս և 26 տոկոս):

բողոքները նաև Վարչական դատարան: Ընտրական հանձնաժողովներում գործերի վարույթը կասեցվում է, եթե գործը արդեն քննվում է դատարանում: Թեկնածուների կողմից ներկայացված ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ բողոքները, ինչպես նաև քարոզարշավի անցկացման ընթացքում առաջացած «անհաղթահարելի խոչընդոտների» մասին հայտարարությունը գտնվում են միայն Սահմանադրական դատարանի ընդատության տակ: Ընտրություններին առնչվող այլ հարցերի շուրջ քաղաքացիները կարող են վիճարկել իրավական դրույթների սահմանադրականությունը միայն բոլոր դատական միջոցները սպառելուց հետո: Նմանատիպ դեպքերի քննության համար նախատեսված ժամկետները կարող են տևել մինչև ինը ամիս, ինչը չի երաշխավորում ճիշտ ժամանակին իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կիրառում ընտրական ժամանակահատվածում, ինչպես ամրագրված է 1990 թ. ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերության մեջ:³⁶

Նախքան ընտրությունների օրը, ԿԸՀ-ն ստացել է հինգ բողոք: Ընտրական գրավի վերաբերյալ երկու բողոք էր ստացվել, որոնք մերժվել էին այն հիմնավորմամբ, որ ընտրական գրավի չափը սահմանված է Ընտրական օրենսգրքով և հետևաբար ԿԸՀ-ի իրավասությունից դուրս է: Երեք այլ բողոք մերժվել են ըստ էության:³⁷ Վարչական դատարանը ստացել է հինգ բողոք:³⁸ Բոլոր բողոքները չեն քննարկվել ընդատության պակասի պատճառով կամ մերժվել են ըստ էության: Որոշումները հրապարակվել են դատարանի կայքում:

Սահմանադրական դատարանը տեղեկացրել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ընտրական գրավի խնդրի վերաբերյալ նախագահի առաջադրված թեկնածուների երկու բողոքների մասին, որոնք պահանջել են այն համարել քարոզարշավի անցկացման համար «անհաղթահարելի խոչընդոտ» և այս կերպ հետաձգել ընտրությունները: Այս բողոքները համարվել են անընդունելի: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ նախագահի մեկ այլ առաջադրված թեկնածու ներկայացրել է երրորդ բողոքը որպես քաղաքացի ընտրական գրավի պահանջի սահմանադրականության վերաբերյալ: Այս բողոքը դեռևս քննության մեջ է:

³⁶ 1990 թ. ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությունը սահմանում է, որ «ամեն մարդ ունենալու է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ընդդեմ վարչական որոշումների, որպեսզի երաշխավորվի հիմնարար իրավունքների հարգումը և ապահովվի իրավական համակարգին վնաս չհասցնելը»:

³⁷ Մի դեպքում պարոն Ղուկասյանը պնդում էր, որ պարոն Սարգսյանի թեկնածությունը հարցի տակ է դնում ընտրությունների օրինականությունը և պահանջում էր հանել նրա թեկնածությունը: Մի այլ դեպքում, նա պահանջում էր հանել պարոն Սարգսյանի քարոզչական հովվակներից մեկի այն հատվածը, որտեղ նա երևում էր: Նախագահի առաջադրված թեկնածու Ռուբեն Այվազյանը

³⁸ Երկու բողոքներ վիճարկել են թեկնածուների գրանցման վերաբերյալ ԿԸՀ որոշումները ընտրական գրավի հետ կապված: Երկու այլ դեպքերում բողոքատուները պնդել են, որ ԱՎԿ-ն անտեղի մերժել է նրանց 10 տարվա մշտական բնակության տեղեկանքի տրամադրումը: Պարոն Այվազյանը բողոքարկել է ԿԸՀ-ի որոշումը, ԿԸՀ անդամների կողմից բացասական քարոզչություն արգելելու վերաբերյալ:

Գլխավոր դատախազությունը, Ոստիկանությունը և Հատուկ հետախուզական ծառայությունը հետաքննում են ընտրություններին առնչվող շուրջ 90 գործեր, և հրապարակել են տեղեկատվություն իրենց կայքերում: Դեպքերի մեծ մասը վերաբերում էր ընտրակաշառքին, ընտրողների նկատմամբ ահաբեկմանը և քարոզչության գործունեության արգելքին: Մինչ այս մարմինները հավաստիացնում էին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք անմիջապես կարձագանքեն, գործերի մեծ մասը հետաքննության մեջ են, քանի որ չկան սեղմված ժամկետներ ընտրություններին առնչվող քրեական հանցանքների համար, և կիրառվում են կանոնավոր քրեական վարույթներ: Ի լրումն, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են պաշտոնատար անձանց կողմից ընտրողների վրա ճնշումների դեպքերի, ընտրական գրավի և ընտրական ցուցակների վերաբերյալ 63 բողոքներ:

Տեղական և միջազգային դիտորդներ

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրությունների միջազգային և տեղական դիտարկում: Թեկնածուների վստահված անձինք ունեն նույն իրավունքները, ինչ դիտորդները: Տեղական դիտորդները կարող էին առաջադրվել հանրային կազմակերպությունների կողմից ներգրավված ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում: Անհատները պարտավոր էին հանձնել ԿԸՀ-ի կողմից անցկացված ստուգարք և ստանալ ԿԸՀ-ի որակավորման վկայագիր, որը տրվում է երեք տարվա ժամկետով:³⁹ Ներառական կերպով ԿԸՀ-ն հավատարմագրել է 6251 տեղական դիտորդներ 26 հասարակական կազմակերպություններից, 572 դիտորդներ 10 միջազգային կազմակերպություններից, 34 դիտորդներ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններից և ԿԸՀ-ի կողմից հրավիրված ընտրությունների կառավարման արտաքին մարմինների 25 ներկայացուցիչներ:

Ընտրությունների օր

Քվեարկության օրը ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և խաղաղ: ԿԸՀ-ն հայտարարել է քվեարկության նախնական արդյունքների 61.2 տոկոսը՝ էական մարզային տարբերություններով: Կեսգիշերից սկսած ԿԸՀ-ն սկսել է իր կայքում հրապարակել ընտրությունների նախնական արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի: Ընտրությունների վերջնական նախնական արդյունքները հայտարարվել են հաջորդ օրը վաղ առավոտյան, ըստ որի պարոն Մարգսյանը ստացել է քվեների 58.64 տոկոսը և նրան համապատասխանաբար հաջորդել են պարոն Հովհաննիսյանը՝ 36.74 տոկոս, պարոն Բագրատյանը՝ 2.15 տոկոս, պարոն Հայրիկյանը՝ 1.23 տոկոս, պարոն Ղուկասյանը՝ 0.57 տոկոս, պարոն Սեդրակյանը՝ 0.42 տոկոս և պարոն Մելիքյանը՝ 0.24 տոկոսը:⁴⁰

³⁹ 2012 թ. Խորհրդարանական ընտրություններին 54 հասարակական կազմակերպությունների շուրջ 27,000 տեղական դիտորդներ են հավատարմագրվել:

⁴⁰ Տես՝ <http://res.elections.am/images/doc/18.02.13n.pdf>

Դիտարկված 75 ընտրական տեղամասերից գերակշիռ մեծամասնությունում տեղամասի բացման ընթացակարգերը Միջազգային ընտրությունների դիտորդական առաքելության (ՄԸԴԱ) դիտորդները ընդհանուր առմամբ գնահատել են դրական: Չնայած քվեարկությունը եղել է պատշաճ և լավ կազմակերպված, 970 դիտարկումների գերակշռող մասում ՄԸԴԱ-ի դիտորդները բացասական են գնահատել դիտարկված բոլոր դեպքերի 5 տոկոսը՝ հիմնականում անտեղի միջամտելու և որոշ դեպքում լուրջ ընտրախախտումների պատճառով:

Բազմաթիվ դեպքերում ՄԸԴԱ-ի դիտորդները դիտարկել են թե՛ ինչպես ընտրատեղամասերից դուրս ՀՀԿ-ի կողմնակիցները ուղղորդում են ընտրողներին, ինչպես նաև գործող նախագահի անձինք միջամտում էին կամ ուղղորդում էին ՏՀՀ-ների աշխատանքը (դիտարկված տեղամասերի 7 տոկոսում), փորձում էին ազդել ընտրողների կամքի վրա (2 տոկոս) և ընտրողների սպառնալու ու ճնշում գործադրելու դեպքեր (2 և 1 տոկոս համապատասխանաբար): Դիտորդները նշել են ընտրակաշառքի մի քանի հնարավոր դեպքեր և երկու դեպքում էլ անմիջականորեն դիտարկել են: Թեկնածուի վստահված անձինք ներկա են գտնվել դիտարկված ընտրատեղամասերի 88 տոկոսում՝ հիմնականում ներկայացնելով գործող նախագահին: Մյուս թեկնածուների վստահված անձինք ներկա են գտնվել սահմանափակ թվով տեղամասերում: Տեղական դիտորդները ներկա են գտնվել դիտարկված ընտրատեղամասերի 63 տոկոսում:

ՄԸԴԱ-ի դիտորդները արձանագրել են մի շարք լուրջ իրավախախտումներ՝ ներառյալ խմբակային քվեարկություն (6 տոկոս), ոչ պատշաճ կարգով կնքված ընտրատուփերի առկայություն (5 տոկոս), ցուցակներում մի շարք նույնանման ստորագրությունների առկայության (3 տոկոս) և բազմակի քվեարկության դեպքեր (2 տոկոս): Միջազգային դիտորդները նաև զեկուցել են ընտրատուփի լցումնան հնարավոր չորս դեպքերի մասին: Դիտարկված ընտրատեղամասերի 6 տոկոսում ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի նշում կատարել իրենց քվեաթերթիկների վրա, և դիտարկված 12 տոկոսում՝ նախքան ընտրախցից դուրս գալը դրանք ծրարի մեջ դրել: Ընտրողների անձնագրերում դրվող հատուկ կնիքի թանաքը, որը բազմակի քվեարկության դեմ երաշխիք է և պետք է լիներ տեսանելի 12 ժամ, հեշտությամբ մաքրվել է՝ չնայած ԿԸՀ-ի նախնական փորձարկումներին: Այցելած ընտրատեղամասերի 7 տոկոսում մեկ կամ ավելի ընտրողներ ետ են դարձվել, քանի որ հիմնականում նրանց անունները բացակայել են ընտրական ցուցակներից:

Դիտարկված ընտրական 106 տեղամասերում, բացառությամբ 9 տեղամասի, ձայների հաշվարկման գործընթացը դրական է գնահատվել ՄԸԴԱ-ի դիտորդների կողմից: Որոշ դիտորդներ զեկուցել են ընթացակարգային սխալների մասին՝ ներառյալ ընտրական ցուցակներում ընտրողների և ստորագրությունների քանակի չստուգման դեպքերը (9 և 7 դեպքեր համապատասխանաբար): 10 հաշվարկներում ոչ բոլոր քվեաթերթիկներն էին ցույց տրվում այնպես, որպեսզի բոլոր ներկա գտնվողները կարողանան տեսնել, թե ում է տրվել քվեն: 11 դեպքերում ՏՀՀ-ները դժվարացել են արձանագրություններում լրացնել արդյունքները, իսկ 7 դեպքերում արձանագրության ձևը նախապես ստորագրված է

եղել, և 5 դեպքերում արձանագրությունները չեն հրապարկվել: Ոչ ՏԸՀ-ի անդամներ դիտարկել են քվեների 14 հաշվարկման դեպքեր:

Աղյուսակավորման գործընթացը գնահատվել է դրականորեն բոլոր 41 ԸԸՀ-ներում բացառությամբ մեկի՝ 90 դիտարկումների հիման վրա: Այնուամենայնիվ, ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են, որ 12 ԸԸՀ-ների տարածքները համապատասխան չեն եղել, և մարդկանց կուտակումները բացասական են ազդել ընթացքի վրա 12 ԸԸՀ-ներում: ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են, որ ԸԸՀ ժամանման պահին ոչ բոլոր ՏԸՀ-ների արձանագրություններն են ամբողջովին լրացված եղել (36 զեկույցներ), և ՏԸՀ-ները ստիպված են եղել ուղղել թվաբանական սխալները (19 զեկույցներ): 12 ԸԸՀ-ներում ՄԸԴԱ-ի դիտորդները ի վիճակի չեն եղել դիտարկել արդյունքների համակարգչային մուտքագրումը:

*Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական
փաստաթուղթը:*

Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունը սկսել է իր աշխատանքները Երևանում հունվարի 10-ից: Այն ներառում է 16 մասնագետներ մայրաքաղաքում և 24 երկարաժամկետ դիտորդներ՝ տեղակայված ամբողջ Հայաստանի տարածքում:

Ընտրությունների օրը 283 կարճաժամկետ դիտորդներ են տեղակայվել, այդ թվում, 24 անդամ ԵԽԽՎ պատվիրակությունից, 9 անդամ ԵԽ պատվիրակությունից: Ընդհանուր առմամբ դիտորդներ են եղել ԵԱՀԿ 36 Մասնակից երկրներից և մեկ գործընկեր պետությունից: Ընտրությունները դիտարկվել են ընդհանուր 1,988 ընտրական տեղամասերից ավելի քան 853-ում: Չայների հաշվարկումը դիտարկվել է բոլոր ընտրատարածքներից 106 ընտրական տեղամասերում: Արդյունքների ամփոփումը դիտարկվել է բոլոր 41 ԸԸՀ-ներում:

Դիտորդները շնորհակալություն են հայտնում Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ընտրությունները դիտարկելու հրավերի համար, Կերտրոնական Ընտրական Հանձնաժողովին՝ իր համագործակցության և հավատարմագրման փաստաթղթերը տրամադրելու, Արտաքին գործերի նախարարությանը և այլ պետական մարմիններին իրենց աջակցության և համագործակցության համար: Դիտորդներն իրենց գնահատանքն են հայտնում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին, Հայաստանում հավատարմագրված դեսպանություններին և միջազգային կազմակերպություններին իրենց համագործակցության համար:

Ընտրությունների միջազգային դիտարկում
 Հայաստանի Հանրապետություն Նախագահի ընտրություններ
 18 Փետրվար, 2013 թ.
 Հայտարարություն նախնական հանգամանքների
 և եզրակացությունների վերաբերյալ

Հետագա տեղեկատվության համար խնդրում ենք դիմել՝

- Տիկին Դեսպան Հայդի Թալիավինի՝ Երևանում ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ դեկավար (+374-10-548 999)
- Պարոն Թոմաս Ռիմեր՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ներկայացուցիչ (+48-609-522 266) կամ Պարոն Ռաուլ Մուրեզան՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ընտրությունների խորհրդատու Վարշավայում (+48-22-520 0669)
- Բոգդան Տոբկատուրի, Քարտուղար, ԵԽԽՎ միջխորհրդարանական համագործակցություն և ընտրությունների դիտարկում, Հայաստանում (+374-98355387), Ստրասբուրգում (+33 388 413 282)
- Էմիլյա Գալլեգո Պերոնա ԵԽ (+32 22844061)

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ հասցե՝

Բաղրամյան 18, 0010 Երևան

Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս: +374-10-545 922

Ֆաքս: +374-10-545 916

Էլ-հասցե: office@odihr.am

Կայք: www.osce.org/odihr/elections/armenia/2012